ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴԻ

Մեր ընթերցողները կարդացին «Մը-շակի» աշխատակից Գր. Չալխուշեանի խորհրդատու կոչը, ուղղված հայութեան բոլոր խաւերին՝ նպաստել դպրոցական ֆոնդի իրագործման, իբրև յաւերժ յիշատակ ազգային պատմական-կուլտուրական մեծ ոճոնի՝ հայ գրերի գիւտի 1500-ամեակի։

Այդ ֆոնդը պէտք է ստեղծի, իրագործի ինքն ամբողջ հայ ժողովուրդը. ունևոր և չունևոր, հարուստ և աղքատ, կապիտալիստ և պրոլետար, բանւոր, վաճառական, արհեստաւոր, հոգևորական, քահանայ, պաստաւոր, գիւղացի և քաղաքացի՝ ամէն մարդ իր լուման պէտք է ձգէ ազգային ընդհանուր գանձանակի մէջ, այն գանձանակի, որ պէտք է լինի հիմն, սիւն մեր դպրոցների, դպրոցների, որոնցից է միայն կախված և լեզուի պահպանութիւնը, և գրականութեան բարգաւաճումը, և մեր ապագայ կուլտուրան։

Ժողովրդի հետ միասին հայութեան բոլոր մտաւոր և բարոյական ոյժերը իրանց աշխատութիւնը, ջանքերը խարսխ պէտք է դնեն այդ մեծ գործի իրականացման համար ամեն տեղ՝ քաղաքներում, աւաններում, գիւղերում, դաշտերում, բուն երկրում և գաղթավայրերում։

Այդ նպատակին հասնելու համար, բոլորովին մի կողմն պէտք է թողնել որևէ ձգտումն, որևէ միտք՝ դպրոցական ֆոնդի կողքին մի ուրիշ ֆոնդ ստեղծելու, ինչպէս, օրինակ, ոմանք առաջարկում են հիմնել նաև գրական ֆոնդ։

Եւ մենք առաջարկում ենք մի կողմը թողնել այդ միտքը ոչ թէ նրա համար, որ գրական ֆոնդը անհրաժեշտ չենք գտնում, ոչ, այլ որովհետև չենք կամենում, որ ջլատվեն ոյժերը, ջանքերը, որովհետև աւելի նպատակայարմար և խելացի ենք գտնում նախ իրագործել մի արդէն սկսած գործ, որի գլուխ է կանգնել Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որի համար արդէն թոյլտուութիւն է տաւոված, որի համար արդէն հանգանակութիւն շատ տեղերում սկսված է և, վերջապէս, որի նպատակը պարզ և մեկին է, այն է հայոց դպրոցների պահպանութիւնը։ Իսկ գրական ֆոնդի համար դեռ պէտք է թոյլտուութիւն ձեռք բերել, դեռ պէտք է որոշել նրա նպատակը, փունկցիան, որովհետև գրական ֆոնդը երկու նպատակ կարող է ունենալ, կամ հայ գրողներին օգնել նիւթապէս իրանց չքաւորութեան, հիւանդութեան, անկարութեան դէպքերում և կամ հայ գրականութեան զարգացմանը նպաստել, ձեռնարկելով մեծ և կայտառ գրական աշխատութիւնների հրատարակութեան։ Այդ նպատակների համաձայն և կորոշվի, թէ ինչպէս և որպիսի մի սօլիդ հաստատութեան ձեռքում պէտք է լինի գրական ֆոնդի պահպանութիւնը։

Այժմ միացեալ, միահամուռ ոյժերով իրագործենք դպրոցական ֆոնդը։ Այդ պարտականութիւնը կատարելուց յետոյ՝ միանանք և իրագործենք դարձեալ միահամուռ ոյժերով գրական ֆոնդը, կանխապէս որոշելով և նրա նպատակը։

Վերջապէս՝ երբ հրապարակի վրա է դրված երկու առաջարկ, երբ այդ առաջարկներից մէկի դէմ առարկութիւն կայ, իբրև անժամանակի և ոչ ըստ էութեան, իսկ միտը՝ ընդհանուր հաւանութիւն է գտել և ունի ամենից շատ նպաստաւոր պայմանները աջողութեան համար, պարզ է, որ նախամեծարութիւնը պէտք է տալ այդ ընդհանուր հաւանութիւն գտած առաջարկին։

Ուրեմն, առ այժմ մի կողմն պէտք է թողնել գրական ֆոնդի միտքը և բոլոր ոյժերը, մտքերը կենտրոնացնել դպրոցական ֆոնդի իրագործման համար։

Հ. Առաքելեան